



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ  
ՀՐԱՄԱՆ

No 161-Ա/Ք

« 17 » 03 2015թ.

**ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՇԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ  
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԵԿԱՎԱՐՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ (ՀԱՎԱՍՏԱԳԻՐ) ՍՏԱՆԱԼՈՒ  
ՆՊԱՏԱԿՈՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ  
ԵՐԱՇԽԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 6-ի N 973-Ն հրամանով հաստատված կարգի 5-րդ կետը և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2015 թվականի մարտի 10-ի N 140-Ա/Ք հրամանով ձևավորված հանձնաժողովի եզրակացությունը՝

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ.**

1. Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալու համար վերապատրաստումներ իրականացնելու համար երաշխավորել հետևյալ կազմակերպություններին.

- 1) Ուսուցման ազգային հիմնադրամ
- 2) Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան
- 3) «Մաստեր Սթայլ» ՍՊԸ
- 4) «Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ
- 5) «Մանկավարժական նախաձեռնություն» հայկական ասոցիացիա ՀԿ

2. ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչության պետ Ա.Բաղդասարյանին՝ հրապարակել երաշխավորված կազմակերպությունների ցանկը:

3. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ղեկավար Մ.Ղազարյանին:

Handwritten signature in black ink, reading "Արսեն ԱՆՈՏՅԱՆ". The signature is written over a yellow circular stamp that contains a question mark.

ԱՐՄԵՆ ԱՇՈՏՅԱՆ